# Հո, յաման ու յար ջան / Ho, yaman u yar jan

Չափավոր

**Andante**




*Հո՛, յա՛ման ու յա՛ր ջան,*
*Չէ՛, յա՛ման ու մարջան:*

*Ho, yaman u yar jan,*
*Ch'e, yaman u marjan.*

1. Էսօր նորը նորել է,
   *Հո՛, յա՛ման ու յա՛ր ջան,*
   Նորել է՝ բոլորել է.
   *Չէ՛, յա՛ման ու մարջան.*
   Յա՛ր, քո լուսնակ երեսից
   *Հո՛, յա՛ման ու յա՛ր ջան,*
   Իմ սիրտը մոլորել է:
   *Չէ՛, յա՛ման ու մարջան:*

2. Քան լուսինն ամպի տակով՝
   *Հո՛, յա՛ման...*
   Դու ջուր կերթաս դորակով.
   *Չէ՛, յա՛ման...*
   Հոգիս քեզ մատաղ լինի,
   *Հո՛, յա՛ման...*
   Սիրտըս կէրես կըրակով:
   *Չէ՛, յա՛ման...*

3. Ջուրն իմ տան տակից բըխար,
   *Հո՛, յա՛ման...*
   Էրված սիրտըս լըվանար.
   *Չէ՛, յա՛ման...*
   Յա՛ր, քո տըված խոցերը
   *Հո՛, յա՛ման...*
   Քո ձեռներով լավանար:
   *Չէ՛, յա՛ման...*

1. Esor norə norel e,
   *Ho, yaman u yar jan,*
   Norel e bolorel e:
   *Ch'e, yaman u marjan:*
   Yar, k'o lusnak yeresits'
   *Ho, yaman u yar jan,*
   Im sirtə molorel e.
   *Ch'e, yaman u marjan.*

2. K'an lusinn ampi takov
   *Ho, yaman...*
   Du jur kert'as dorakov:
   *Ch'e, yaman...*
   Hok'is k'ez matagh lini,
   *Ho, yaman...*
   Sirtəs keres kərakov.
   *Ch'e, yaman...*

3. Jurn im tan takits' bəkhar,
   *Ho, yaman...*
   Ervats sirtəs ləvanar:
   *Ch'e, yaman...*
   Yar, k'o təvats khots'erə
   *Ho, yaman...*
   K'o dzerrnerov lavanar.
   *Ch'e, yaman...*